

ԿԱՌԱՌ ԿՈՐԱԿԻ

13 ԱՊՐԻԼ 2008

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1-2
Շարական	էջ 2
Բացատրութիւն	էջ 2-3
Շարքուայ ժամանակացոյց	էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ
 «ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ»
 ԳՐՔԷՆ
 (13.16-43)

Պօղոս ոտքի ելաւ, ձեռքով նշան ըրաւ որպէսզի լռեն, եւ ըսաւ.

«Ո՛վ իւրայշլացիներ եւ աստուածավախ մարդիկ, մտի՛կ ըրէք: Այս ժողովուրդին՝ Իւրայշլի Աստուածը ընտրեց մեր հայրերը, բազմացուց մեր ժողովուրդը որ Եգիպտոսի մէջ որպէս պանդուխտ կ'ապրէր, եւ իր մեծ զօրութեամբ զանոնք հոնկէ հանեց: Շուրջ քառասուն տարի անապատին մէջ կերակրեց զանոնք: Ապա Քանաան երկրի բնակիչ եօթը ազգերը պարտութեան մատնելով, անոնց երկիրը մեր ժողովուրդին տուաւ որպէս ժառանգութիւն: Այս բոլորը եղան մօտաւորապէս չորս հարիւր յիսուն տարիներու ընթացքին: Այնուհետեւ Դաւանորներ տուաւ անոնց, մինչեւ Սամուէլ մարգարէի ժամանակը, երբ մեր ժողովուրդը թագաւոր ուզեց, եւ Աստուած թագաւոր կարգեց Սաւուղը, Կիսի որդին որ Բենիամինի ցեղէն էր, քառասուն տարուան համար: Սաւուղէն ետք անոնց վրայ թագաւոր կարգեց Դաւիթը, որուն մասին նաեւ վկայեց, ըսելով.

“Դաւիթը, Յեսսէի Որդին, սրտիս խօսող անձն է, որ ամբողջութեամբ իմ կամքս պիտի կատարէ”:

«Անոր սերունդէն էր որ Աստուած Իւրայշլի տուաւ իր խոստացած Փրկիչը՝ Յիսուսը: Բայց նախքան անոր հրապարակ գալը, Յովհաննէս Իւրայշլի ամբողջ ժողովուրդին կը քարոզէր որ ապաշխարեն եւ մկրտուին: Եւ իր պաշտօնը լրացնելու ժամանակ, Յովհաննէս ըսաւ. “Ո՛վ կը կարծէք զիս: Ես ձեր սպասած անձը չեմ: Ահա ինձմէ վերջ կու գայ անիկա, որուն կօշիկները հանելու իսկ արժանի չեմ ես”:

«Եղբայրներ, Աբրահամեան տոհմի գաւակներ եւ ձեր մէջ գտնուող աստուածավախ մարդիկ. փրկութեան այս պատգամը Աստուած ձեզի՛ դրկեց: Որովհետեւ Երուսաղէմի բնակիչները եւ իրենց իշխանները չճանչցան Յիսուսը, եւ զայն դատապարտելով՝ կատարած եղան խօսքը մարգարէներուն որ ամէն Շաբաթ կը կարդային: Եւ թէպէտ մահուան արժանի յանցանք մը չգտան անոր վրայ, սակայն պահանջեցին Պիղատոսէն որ սպաննուի: Երբ անոր մասին բոլոր գրուածները կատարած եղան, զայն խաչէն իջեցուցին եւ գերեզման դրին: Բայց Աստուած զայն մեռելներէն յարուցանեց, եւ Յիսուս բազմաթիւ օրեր երեւցաւ անոնց՝ որոնք իրեն հետ Գալիլիայէն Երուսաղէմ եկած

էին, եւ որոնք հիմա իր վկաներն են ժողովուրդին առջեւ: Մենք ալ, ահա, ձեզի կ'աւետենք, թէ Աստուած մեր հայրերուն տուած իր խոստումը կատարեց մեր օրերուն, որ անոնց որդիներն ենք: Այդ խոստումը կատարեց՝ Յիսուսը յարուցանելով, ինչպէս երկրորդ Սաղմոսին մէջ ալ գրուած է.

“Դմ որդիս ես դուռն, այսօր քեզ ծնայ”:

Նոյն այն իրողութիւնը, որ Աստուած զայն մեռելներէն յարուցանեց եւ անիկա այլեւս բնաւ մահ պիտի չտեսնէ, խոստում մըն է՝ մեզի ուղղուած, որովհետեւ Աստուած այսպէս կ'ըսէ.

“Ձեզի պիտի տամ այն իսկական օրհնութիւնը որ Դաւիթի խոստացայ”, եւ ինչպէս ուրիշ Սաղմոսի մը մէջ սաղմոսագիրը կ'ըսէ. “Պիտի չթողուս որ բու ծառայիդ մարմինը փտութիւն տեսնէ”:

«Արդ, Դաւիթ իր սերունդին մէջ Աստուծոյ ծառայելէ ետք մեռաւ եւ իր հայրերուն քով թաղուեցաւ, եւ իր մարմինը փտեցաւ: Բայց Աստուած յարուցանեց Յիսուսը, որուն մարմինը փտութիւն չտեսաւ: Ուստի իմացէ՛ք, եղբայրներ, Յիսուսի միջոցաւ մեղքերու թողութիւն կը քարոզուի ձեզի: Ո՛վ որ անոր կը հաւատայ՝ կ'արդարանայ իր բոլոր մեղքերէն, որոնցմէ չկրցաք արդարանալ Մովսէսի Օրէնքին միջոցաւ: Զգո՛յ՜ եղէք ուրեմն որ ձեր վրայ չգայ այն ինչ որ մարգարէները կ'ըսեն.

“Տեսէ՛ք, ո՛վ արհամարհողներ, զարմացէ՛ք եւ կորսուեցէ՛ք. որովհետեւ ձեր օրերուն այնպիսի գործ մը պիտի ընեմ, որուն պիտի չհաւատաք, նոյնիսկ երբ մէկը պատմէ ձեզի”»:

Երբ Բառնաբաս ու Պօղոս ժողովարանէն դուրս ելան, մարդիկ կ'աղաչէին որ միւս Շաբաթ եւս նոյն նիւթին մասին խօսին: Ժողովուրդին ցրուելէն ետք, բազմաթիւ հրեաներ եւ հրէութեան դարձած բարեպաշտ օտարազգիներ հետեւեցան Պօղոսի եւ Բառնաբասի, որոնք անոնց հետ խօսեցան եւ համոզեցին զանոնք որ շարունակեն Աստուծոյ շնորհքին մէջ մնալ:

ԸՆԹԵՐՑՈՒՄ
 ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
 ԸՆԴՀԱՆՐԱՎԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ
 (5.1-14)

Երէցնե՛ր, որպէս երիցակից մը որ ձեզի պէս վկայ եմ Քրիստոսի չարհարանքներուն եւ ձեզի հետ ալ մասնակից պիտի ըլլամ գալիք փառքին որ պիտի յայտնուի, կ'աղաչեմ ձեզի. ձեզի վստահուած Աստուծոյ հօտը արածեցէ՛ք ո՛չ թէ իբր պարտադրանք կատարելով վերակացութեան ձեր պաշտօնը, այլ կամաւորաբար, ինչպէս Աստուած կ'ուզէ: Ո՛չ թէ դրամի սիրոյն, այլ յօժարութեամբ: Ո՛չ թէ ձեզի վստահուած մարդոց ձեր անձերը պարտադրելով, այլ օրինակ ըլլալով ձեր հօտին. որպէսզի երբ Հովուապետը յայտնուի՝ անթառամ փառքի պսակը ընդունիք:

Նոյնպէս ալ դուք, երիտասարդներ, հնազանդ եղէք ձերերուն: Բոլորդ ալ խոնարհաբար ծառայեցէ՛ք իրարու, որովհետեւ ինչպէս Առակաց Գիրքը կ'ըսէ.

«Աստուած հակառակ է ամբարտաւաններուն, մինչ խոնարհներուն շնորհի կու տայ»:

Հետեւաբար Աստուծոյ հզօր ձեռքին տակ խոնարհեցէք, որպէսզի երբ յարմար ժամանակը գայ՝ ձեզ բարձրացնէ: Ձեր բոլոր հոգերը Աստուծոյ ձեռքէք, որովհետեւ ի՛նքը կը հոգայ ձեր մասին:

Արթուն եւ պատրաստ եղէք, որովհետեւ ձեր թշնամին՝ Սատանան առիւծի պէս մռնչելով կը շրջի եւ կլլելու համար մէկը կը փնտռէ: Հաստատուն հաւատքով դէմ դրէք անոր, գիտնալով որ աշխարհի մէջ բոլոր ձեր եղբայրներն ալ նոյն չարչարանքներէն կ'անցնին: Եւ բոլոր շնորհքներու պարգեւիչը՝ Աստուած, որ կանչեց ձեզ, նկատի ունենալով որ չափով մը մասնակից եղաք Յիսուսի չարչարանքներուն, պիտի ձեզ կազդուրէ, զօրացնէ եւ ամուր հիմերու վրայ հաստատէ ձեզ: Յաւատեան ի՛րն են իշխանութիւնն ու փառքը: Ամէն:

Այս հակիրճ նամակը ձեզի գրեցի Սիդուանոսի ձեռքով - որ ըստ իս մեր հաւատարիմ եղբայրներէն է - որպէսզի քաջալերեմ ձեզ եւ վստահեցնեմ թէ Քրիստոսի չարչարակից ըլլալը Աստուծմէ տրուած իսկական շնորհք մըն է, որ դուք կը վայելէք ապահովաբար: Այստեղ, Բաբելոնի մէջ գտնուող եկեղեցին, որ ձեր ընտրելակիցն է, կ'ողջունէ ձեզ: Նոյնպէս բարեւներ Մարկոսէն, իմ որդիէս: Սիրոյ համբոյրով ողջունեցէք զիրար: Խաղաղութիւն ձեր բոլորին որ Քրիստոս Յիսուսի միացած էք: Ամէն:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
(5.19-30)**

Յիսուս անոնց ըսաւ. «Հաստատ գիտցէք, թէ մարդու Որդին ինք իրմէ ոչինչ կը կատարէ, այլ կը կատարէ միայն այն՝ ինչ որ կը տեսնէ թէ Հայրը կը կատարէ: Որովհետեւ ինչ որ Հայրը կը գործէ, Որդին ալ նոյնը կը գործէ: Հայրը կը սիրէ Որդին եւ անոր ցոյց կու տայ ինչ որ ինք կը կատարէ: Տակաւին ձեր տեսածներէն աւելի սքանչելի գործեր ալ ցոյց պիտի տայ Որդիին, այնպէս որ դուք պիտի գարմանաք: Ինչպէս որ Հայրը մեռելները կը յարուցանէ եւ կեանք կու տայ անոնց, նոյնպէս ալ Որդին կեանք կու տայ անոնց՝ որոնց ինք կ'ողջէ: Եւ Հայրը ոեւէ մէկը չի դատեր, այլ դատելու իշխանութիւնը ամբողջութեամբ յանձնած է իր Որդիին, որպէսզի բոլորն ալ պատուեն Որդին, ինչպէս որ Հայրը կը պատուեն: Ան որ չի պատուեր Որդին, չի պատուեր Հայրը որ գայն զրկած է:

«Հաստատ գիտցէք, ան որ իմ խօսքերս կը լսէ եւ կը հաւատայ անոր որ զիս զրկեց, յաւիտենական կեանք ունի եւ պիտի չդատապարտուի, որովհետեւ արդէն իսկ մահէն կեանքի անցած է: Վստահ եղէք, ժամանակ կու գայ - եւ արդէն իսկ եկած է - երբ մեռելները Աստուծոյ Որդիին ձայնը պիտի լսեն եւ լսողները պիտի ապրին: Որովհետեւ, ինչպէս որ Հայրը կեանք պարգեւելու զօրութիւնը ունի իր մէջ, այդ զօրութիւնը տուած է նաեւ Որդիին: Նոյնպէս ալ դատելու իշխանութիւնը տուաւ Որդիին, որովհետեւ անիկա մարդու Որդին է: Ուրեմն մի՛ գարմանաք որ ըսի, թէ ահա կու գայ ժամանակը, երբ բոլոր անոնք որոնք գերեզմաններու մէջ են՝ պիտի լսեն անոր ձայնը եւ դուրս գան. անոնք որ բարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ ապրին, իսկ անոնք որ չարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ դատապարտուին: Ես ինձմէ չէ որ կը դատեմ, այլ կը դատեմ այնպէս ինչպէս Հօրմէս կը լսեմ. եւ ուրեմն իմ դատաստանս արդար է, որովհետեւ կը գործադրեմ ո՛չ թէ իմ կամքս, այլ կամքը անոր՝ որ զիս զրկեց»:

ՀԱՐՑ* ԲԿ (2)

Անսկիզբ եւ ամենազօր Աստուած,
որ Միածին Որդիդ առաքեցիր
մեր փրկութեան համար.
կ'օրհնենք քեզ՝ մեր հայրերուն Աստուածը:

Հօրմէ ծնար՝ աննաեւիօրէն մի մնալով
Անոր էութեան հետ.
մեր փրկութեան համար
կուսական արգանդէն մարմին առիր.
կ'օրհնենք քեզ՝ մեր հայրերուն Աստուածը:

Քրիստոս,
դուն որ ֆերովբէներուն վերեւ կը բազմիս,
եւ անմարմինները սրբասաց ձայնով
երկինքին մէջ կ'օրհնենք քեզ,
համբերելով չարչարաններուն՝
խաչին վրայ բարձրացար
եւ մահուան գօրութիւնը խորտակեցիր.
կ'օրհնենք քեզ՝ մեր հայրերուն Աստուածը:

*Շարականներու շարք մըն է «Հարցք Յարութեան»ը: Անով Քրիստոսի յարութիւնը կ'օրհնեցուի, ըստ «մեր հայրեր»ու հաւատքին: Մինչ մեր օրերուն հայրութեան գաղափարը հիւծելու վրայ է, անցեալին՝ անիկա կեդրոնական արժէք ունէր:



**ՅԻՆՈՒՆՔԻ ՉՈՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ
(ԾԽԱԿԱՆ ԲՁՅՏՐՈՒԹԻՒՆԱՆՈՒ - ԹԻՒ 11)**

**ԺԱ.
ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ**

- Հարցումներ.
- 1.- Ինչո՞ւ Ս. Զատիկին յաջորդած երրորդ Կիրակին «Կարմիր Կիրակի» կը կոչուի: Նախորդ Կիրակին «Կանաչ» էր, այս Կիրակին՝ «Կարմիր»: Ի՞նչ է կապը:
 - 2.- Կը յիշատակէ՞ դէպք մը:
 - 3.- Ի՞նչ կ'ըսեն Ս. Գրային ընթերցումները:

Պատասխաններ.

1.- Քանի որ Զատիկուայ դէպքին եւ անոր ներգործութեան ու արդիւնքին վրէպեցին մինչեւ Հոգեգալուստ երկարող Կիրակիները, ապա ուրեմն «Կարմիր» անունը առաջնահերթաբար կը թելադրէ Յիսուսի փրկարար արեան հեղումը: Երկրորդ, նկատի ունենալով որ Կանաչ

Կիրակի կապուած է Եկեղեցւոյ գաղափարին, «Կարմիր»ը կը թելադրէ Փրկիչին հետեւողներուն արեան հեղոււմը՝ որով Եկեղեցին արգասաւորուեցաւ եւ կ'արգասաւորուի, աշխիճն՝ պտուղներ տուաւ եւ կու տայ: Այս երկու նշանակութիւնները սերտօրէն եւ անանջատելիօրէն իրարու կապուած են:

Շնորհք արքեպիսկոպոս այս կիրակիին համար ըսած է. «Կարմիր Կիրակի կը յիշեցնէ մեզի կարեւորագոյն մէկ երեսը՝ Քրիստոսի յարութեամբ ապահովուած մեր կեանքին, թէ գուպար մըն է քրիստոնէական կեանքը մեր ստորին եւ անասնական հակումներուն դէմ, որոնք կը նուաստացնեն զմեզ ու վար կ'իջեցնեն մարդը իր արժանապատուութեան պատուանդանէն: Պայքար՝ ընկերային քայքայիչ ոյժերու եւ ազգակներու դէմ, սուտի, կեղծիքի, անարդարութեան, չարաշահութեան եւ բոլոր նման ժխտական հակումներու դէմ, որոնք կ'այլաստեն մարդկային ընկերութիւնը: Պատերազմ մըն է այդ կեանքը աշխարհի մէջ վիստացող չարութեանց, մոլութեանց, գայթակղութեանց եւ կեանքի փորձիչ ստորին հրապոյրներուն դէմ...»:

Ըստ Բարգէն Կաթողիկոսի, «հաւանական է, որ Յիւանց Կիրակիներէն երկուսին «Կանաչ» եւ «Կարմիր» կոչուիլը՝ նախապէս կապուած ըլլայ ազգային ժողովրդական անանդութեան մը, թերեւս նոյն իսկ հայոց հին հաւատքէն մնացորդ մը եղած ըլլան ստոնք, նման Տէրընտասի, Ծաղկազարդի եւ Վարդավառի եւ ետքը եղանակաւորուած եւ պատշաճեցուած քրիստոնէական պատմութեան դրուագներուն»:

2.- Այս կիրակի յատուկ դէպք մը չի յիշատակեր, բայց, ինչպէս ըսի, կը թելադրէ Քրիստոսի գոհողութիւնը, եւ Եկեղեցւոյ տարածման համար՝ անոր օրինակով պայքարողներուն նահատակութիւնը:

3.- Ս. Գրային ընթերցումները. Առաքեալներուն Գործերը՝ 13.16-43: Պետրոսի Առաջին Նամակ՝ 5.1-14: Յովհաննէսի աւետարան՝ 5.19-30:

Առաջին ընթերցումը: Պօղոս Առաքեալ եւ Բառնաբաս Պիսիդիայի Անտիոք քաղաքը եկած էին: Շաբաթ օրը ժողովարան կ'երթան: Օրէնքի ու մարգարէներու ընթերցումէն ետք, ժողովրդապետները դիմելով Պօղոսի եւ Բառնաբասի, զանոնք կը հրաւիրեն «քաղաքական պատգամ» մը տալու: Եւ ահա Առաքեալը ոտքի կ'ելլէ եւ կը խօսի, թէ Աստուած ընտրած էր իրենց հայրերը, զանոնք բազմացուցած պանդխտութեան երկրին՝ Եգիպտոսի մէջ, եւ «իր մեծ զօրութեամբ» զանոնք հանած այնտեղէն: Անպատարաւոր քաղաքներուն թափառումներուն ժամանակ՝ զանոնք կ'երակրած էր, Քանաան երկիրը «որպէս ժառանգութիւն» տուած էր անոնց: Առաջնորդելու համար իր ժողովուրդը՝ Դատաւորներու շարքը հաստատած էր, ապա թագաւորներ կարգած՝ Սաւուղը եւ Դաւիթը:

Դաւիթ թագաւորի մասին աստուածային հանութիւնը վերջիշեցնելէ ետք՝ Առաքեալը կ'ըսէ, թէ անոր սերունդէն էր որ Աստուած տուաւ իր խոստացած Փրկիչը՝ Յիսուսը: Կը յիշէ Յովհաննէս Մկրտիչի առաքելութիւնը, Յիսուսի մերժումը, դատապարտումը, թաղումը, յարութիւն առնելը, «բազմաթիւ օրեր» երեւնալը անոնց՝ որոնք «իր վկաներն են ժողովուրդին առջեւ»: Եւ կը յայտարարէ, թէ Քրիստոսի յարութեան իրողութիւնը «խոստում մըն է՝ մեզի ուղղուած», թէ ով որ անոր կը հաւատայ «կ'արդարանայ

իր բոլոր մեղքերէն», եւ այլեւս բնաւ մահ չի տեսներ:

Երկրորդ ընթերցումը: Պետրոս Առաքեալ իր խօսքը նախ ուղղելով Եկեղեցիներու առաջնորդներուն (իր որակումով՝ «երեցներ»ուն), զանոնք կը հրաւիրէ իրենց վստահուած «Աստուծոյ հօտը» արածելու «ոչ թէ իբր պարտադրանք կատարելով», այլ կամաւորաբար, «ինչպէս Աստուած կ'ըզէ»: Եկեղեցւոյ մը առաջնորդը ոչ թէ իր անձը պիտի պարտադրէ իրեն վստահուած մարդոց վրայ, այլ «օրինակ» պիտի ըլլայ անոնց:

Ապա երիտասարդները կը հրաւիրէ, որ հնազանդ ըլլան երեցներուն, ըստ Առակներու Գիրքի պատգամին թէ՛ «Աստուած հակառակ է ամբարտաւաններուն, մինչ խոնարհներուն շնորհք կու տայ»:

Հատուածի վերջաւորութեան իր նամակի գրութեան նպատակը պարզելով՝ Պետրոս Առաքեալ կ'ըսէ. «Այս հակիրճ նամակը ձեզի գրեցի... որպէսզի քաղաքներմ ձեզ եւ վստահեցնեմ, թէ Քրիստոսի չարաշարակից ըլլալը Աստուծմէ տրուած իսկական շնորհք մըն է, որ դուք կը վայելէք ապահովաբար»: Եւ այդ շնորհքը «Քրիստոս Յիսուսի միջոցով... յաւիտեանական փառքին» կանչուած ըլլալն է:

Երրորդ ընթերցումը: Այս հատուածին մէջ Յիսուս ինքզինք «Մարդու Որդի» կը կոչէ: Այս անունը երեք իմաստներով գործածուած է Աստուածաշունչին մէջ. 1.- Իբր նշանակ մարդ էակի. 2.- Իբր նշանակ մարգարէի. եւ 3.- Իբր նշանակ վախճանաբանական երկնառաքան անձին՝ Մեսիային: Նոր Կտակարանին մէջ «Մարդու Որդի» անունը յանախ գործածուած է Յիսուսի համար: Յիսուսի խօսքերուն մէջ անոր գործածութիւնը միաժամանակ եռեակ նշանակութեամբ կայ, աշխիճն՝ իբր խորհրդանիշ իր կատարեալ մարդ ըլլալուն, իր մարգարէական եւ մեսիական առաքելութեան:

Արդ, Մարդուն Որդին «ինք իրմէ ոչինչ կը կատարէ, այլ կը կատարէ միայն այն՝ ինչ որ կը տեսնէ, թէ Հայրը կը կատարէ»: Թէ այս «տեսնել»ը՝ ի՞նչ տեսակ տեսնել է: Սիրոյ «տեսնել» մըն է ասիկա, որուն աղբիւրը Հայրն Աստուած Ի՛նքն է: Մարդու Որդիին կատարածները «սփանչելի գործեր» են: Բայց Աստուած «աւելի սփանչելի գործեր ալ ցոյց պիտի տայ Որդիին»: Այդ «աւելի սփանչելի գործեր»ը՝ յարուցանումն է բոլոր անոնց՝ որոնք կը լսեն եւ կը հաւատան Մարդու Որդիին խօսքերուն: Շատ ուշագրաւ հաստատում մը կայ այստեղ, թէ յարութիւնը միայն ֆիզիկական առումով վերստին կեանքի գալու իմաստը չունի, այլեւ կեանքի ուրիշ որակի. յարութիւնը յաւիտեանական կեանքն է, որուն կ'անցնին բոլոր անոնք՝ որոնք կը լսեն եւ կը հաւատան Աստուծոյ կողմէ առաքուած Մարդու Որդիին՝ Քրիստոսի:

Հիմա, ո՞ր այս երեք հատուածները իրարու կը միանան: Հետեւեալ կորիզին շուրջ.

Քրիստոսի յարութիւնը իր ընդհանրական գորութեանէն գատ, նաեւ անհատ հաւատացեալին համար կեանքի աստուածատուր խոստում է եւ զօրութիւն: Յարութեան հաւատքը մուտքն է «յաւիտեանական կեանք»էն կամ «յաւիտեանական փառք»էն ներս:

Հոգի
ԳԶ

ՅԱԶՈՐԴ ՇԱՐԹՈՒՄ ԺԱՎԱՆԱԿԱՅՈՅ

Երեքշաբթի, 15 Ապրիլ 2008

10.00 > Ս. Գրային սերտոդոլթիւն՝
Ս. ՅԱԿՈԲ Զոյրերու ժողով

Յիւզշաբթի, 17 Ապրիլ 2008

11.00 > Աղօթաժողով՝
Ս. ՅԱԿՈԲ քոյրերու ժողով

Շաբաթ, 19 Ապրիլ 2008

18.30 > Ս. Գրային սերտոդոլթիւն՝
Հայ երիտասարդներուն համար

Կիրակի, 20 Ապրիլ 2008

09.30 > Առաւօտեան ժամերգութիւն
11.00 > Ս. Եւ անմահ Պատարագ

ԱՊՐԻԼԵԱՆ

I

Ս. ՊԱՏԱՐԱԳ

Հինգշաբթի, 24 Ապրիլ, 2008
Երեկոյեան ժամը 7.00-ին

II

ՄԻԶ-ՅԱՐԱՆՈՒԿԱՆԱԿԱՆ ՈՒԳԵԿՈՅՈՒՄ

Ուրբաթ, 25 Ապրիլ, 2008
Երեկոյեան ժամը 8.00-ին
Հայ Արեւմտեան Մայր Եկեղեցի, ԼԵԽՂ

III

Ս. ՊԱՏԱՐԱԳ

Կ'երգէ «Նոր Ծաղիկ» Կրօնաբանութիւն
Երգչախումբ
Կիրակի, 27 Ապրիլ, 2008
Առաւօտեան ժամը 11.00

ՀՈԳԵԻՈՐ ՀԱՄԵՐԳ

Հոգաւարութեամբ՝
ԳԱՆՏԱՅԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ
ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Կաշապարտութեամբ՝
Ս. ՅԱԿՈԲ Առաջնորդաւոր Մայր
Եկեղեցի
Եւ
Ս. ԳԻՐԳ Եկեղեցի

ՆՈՒՐՈՒԾ
Առաջնորդ՝
ԳԵՐԸ. Տ. ԽԱՇԱԿ
ԱՐԵ. ՅԱԿՈԲԵԱՆԻ
40-ԱՄԵԱՅ ՀՈԳԵԻՈՐ
ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ

Վկայութիւն՝
Պրն. ՅԱԿՈԲ ՃԱՄՈՒՅԵԱՆ

Գեղարուեստական Յայտարար
Կը յայտարարուի.

ՅԱՄԻԿ ԳԱՄԱՐԵԱՆ, ՅԱՄԻԿ
ԳԱԽԱԵԱՆ, ՅԱՄԻԿ ԻՆՃԵՐԻԿԵԱՆ

«Նոր Ծաղիկ» Երգչախումբ
ԽԱՐԱԿԱՐՈՒԹԵԱՐ՝ ԷԼՈ ՀՐՈՊՅԵԱՆԻ
ԵՐԳԵՆՈՒՄԸՆԵՐՈՒԹԵԱՐ՝
ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆԵԱՆԻ

Ուրբաթ, 9 Մայիս, 2008-ի
Երեկոյեան ժամը 8.00-ին
Ս. ՅԱԿՈԲ Առաջնորդաւոր Մայր
Եկեղեցի ՄԷԶ